


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պարտք հմր. 8 ՄԶՏ.
Պարտք 10 ՄԶՏ.
Վեցամսեյ և Պարտք 4 ՄԶՏ.
Պարտք 5 ՄԶՏ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ երկու անգամի հա-
մար 2 զուրուշ աւելի անգամներու
համար զատ ստիպարութիւն կըլ-
լայ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցի գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Վաշա-
խիա Ստեփանեան շատաւսի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանդու ծախքը չգճարուած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 5 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսաց Բուժելի մէջ արշաւան-
քը զարմանալի կերպարանք մը կառ-
նու, որ ռազմագիտական արուես-
տին հին կանոններուն բնաւ չյարմա-
րէր : Կարգէ գուրս արագութեամբ
և գրեթէ յանդգնութեամբ առաջ
կը քաշէն, որոյ վախճանը կրնայ ի-
րենց աղիտաբեր ըլլալ : Յունիս 19ին
թիւնով մտած էին, և երկու օրէ 'ի
վեր կըսուէր թէ ոչ միայն Պալքանի
կողմերէ յառաջացած են, այլ և ան-
ցած իսկ : Բարեբաղդաբար իրենց
այս արշաւանացն առաջն առնուե-
ցաւ : Ստոյգ է որ քանի մը վաշտ
Ռուսական զօրքեր խային—Պողազըս-
ւած կիրճէն Պալքանն անցած էին,
քանզի հոն միայն վաշտ մ'Օսմանեան
զօրք կենալով, երկու ժամու չափ
գիւղաղնաբար գիւղաբերէ ետեւ ետ
քաշուելու պարտաւորուած էր : Բայց
Պալքանները պաշտպանելու պաշտոն
ունեցող ծովային զօրքոց նախարար
Բեռնի վաշտն, որ այն տեղէն Ռուսաց
անցնելը չէր յուսար, փութացեր է
անմիջապէս թշնամայն արշաւած կող-
մէն երթալ, և վրան յարձակելով ետ
մղեր է զայն : Ի սկզբան Ռուսք թըր-
նովայէն կապրովա քաղած էին, որ-
պէս թէ Շիպլայի կիրճէն անցնելու
համար, բայց այս պարզապէս ցոյց
մ'էր, և իրենց բռնարշաւանքն ու-
րիշ կողմ ուղղած էին : Եւսմայուրի
հեռագրական պաշտօնատարներէն
մին հեռուէն գիւղի մը հոյ ճարակ
ըլլալ տեսնելով կարծիք էր թէ Ռուսք
հոն հասած էին, և ձգեր վախեր
էր : Կերեկի որ այս գէպքը պատճառ
տուած է Ռուսաց Գըզնալըզ, Իսքի-
—Չաղարա և Եսմայուրի մտած ըլլա-
լու զրոյցներուն, որք բոլորովին ան-
հիմն են : Կայսերական կառավարու-
թիւնը մայրաքաղաքէն քանի մ'օրէ
'ի վեր շարունակ զօրք կը զրկէ Պալ-
քանները : Բուժելի երկաթուղին մի
միայն զինուորական փոխադրութեանց
յատկացած ըլլալով՝ ճանապարհորդ-
է և վաճառք չընդունիր :

Միւս կողմանէ Գարատաղի Օս-
մանեան զօրքերն իրենց վերջին նը-
շանաւոր յաղթութիւններէն ետեւ ոչ
ևս հոն սպասելու պէտք ունենալով
գէպի Բուժելի կը փոխադրին : Մէհ-
մետ Ալի փաշա արդէն Նիշ հասած է :
Գարատաղի Օսմանեան զօրաց մէկ
մեծ մասն ալ Տէտէ—Աղաճ եղած է և
գէպի պատերազմի դաշտը կերթայ :
Իսկ մնացեալները՝ Գարատաղիները
վանելու համար պէտք եղածին չափ
զօրութիւն թողով շարաւթ օրը Սի-
լիսման փաշայի հետ Անթիպարիէն
նաւ նստան :

Դանուրի դաւառին մէջ, ուր
Ռուսք Ձիշթովա ելնելի ետեւ երեք

հատուածի բաժնուելով մին գէպ 'ի
Նիկոպոլիս և Վիտին, երկրորդը գէպ
'ի Ռուսնուդ և երրորդը գէպ 'ի թըր-
նովա քաղած էր, բաւական կուի-
ներ եղան, ուր յաղթութիւնը մեծ
մասամբ Օսմանեան զօրաց կողմը մը-
նաց : Պիէլայի պատերազմին մէջ
Ռուսք պարտուած էին, թէ և իրենց
պաշտօնական հեռագրաւորները կը-
սեն թէ Պիէլան ալ իրենց ձեռք ին-
կած է : Կըսուի նաեւ թէ Ռուսաց
զօրքն ուրիշ մեծ պարտութիւն մ'ալ
կրած է Եսմայուր գետին գծին վրայ
և իւր հաղորդակցութիւնները կըս-
տուած են : Պիէլայի և Ռուսնուդի
մէջ թէսթմանիք անուն տեղի ալ Ռու-
սաց յառաջապահ զօրաց և Օսման-
եան հեծեալազօրաց մէջ կուի մ'եղեր
է, որոյ մէջ Օսմանեան զօրքը մեծ
կորուստներ պատճառեւ է թշնամ-
ւոյն, բայց այս վերջնայն օգնութիւն
հասնելով՝ Օսմանեան հեծեալազօրը
կուիւր գաղափրեցուցեր է : Բուսնուդի
մօտ Մարաթիին մարտկոցներուն և
գիւմար գետուած Ռուսաց թիւա-
նօթներուն մէջ սաստիկ կուի եղաւ
գարծեալ, բայց առանց հետեւ
նաց : Վառնայի և Ռուսնուդի եր-
կաթուղիին հրամանատարն անցեալ
հինգշաբթի հրահանգ տուած էր որ
յիշեալ գծին Բաղկրատի և Ռուս-
նուդի մէջ եղած պաշտօնատարներն
և Նիւթերը Բաղկրատ քաղաին,
Բաղկրատ երկաթուղիին գծին գը-
լուս պիտի ըլլար, քանզի կըսուէր
թէ Ռուսաց հեծեալազօրը Վիշթովայէն
քիչ մը հեռի գումարուած է : Վէ-
թովա Ռուսնուդ երթալու վերջն-
թեր կայարանն է : Բայց Սէրտարը
էքրէմ ուրաթ իրիկուն հրամայած
ըլլալով որ գծին երթուկութիւնը
մինչև Ռուսնուդ շարունակի, են-
թաղերէ հարկ կըլլայ թէ Օսմանեան
հեծեալազօրը Ռուսաց յառաջապահ
ները վաներ է Վիշթովայէն :

Ռուսաց այս արշաւանքը Պուլ-
զարաց պատիւ չբերաւ : Ռուսաց գը-
րաւած տեղերը Պուլզարներն իսլա-
մաց վրայ անգթաբար վարուի սկսան :
Նոյն իսկ Ալալայ կուսակից Տէյլի
Նիւդի թղթակիցը Ձիշթովայէն կը հե-
ռագրէ թէ Պուլզարներն իսլամաց
տուններն յաւար առած են : Ոչ միայն
արք, այլ և կանայք և մանկուք ըս-
պանները են : Այս նոյնպիսի օճիկնե-
րը չեն կրնար առանց զգուշաց յիշ-
ել : Պուլզարը՝ որք իրենց ապստամ-
բութեան պատճառաւ դուրսուած
անգթութեանց վրայ այնչափ աղա-
յակ բարձած էին, իրենց գառն հի-
մա աղտեղեցին գաղաթի սփռադոր-
ծութիւններով որ երբէք չկրնար հա-
սարակաց կարծեաց առջև արդարա-
նալ : Հայաստանի կողմն ալ Ռուսք
բաւական յառաջացած էին, բայց
հոն Հայոց ընթացքն ուրախ տարբեր
եղաւ Պուլզարաց վարմունքէն : Հայերն
հոն իրենց բնաւորութեան ազնու-

թիւնը ցոյց տուին, քանզի ոչ միայն
Օսմանեան կառավարութեան և իս-
լամաց նկատմամբ որ և է անվայել
գործ մը չըրին, այլ և՛ ինչպէս յայտ-
նի է՝ իւշ ֆիլիսէի վանահայրն Օսմ-
կառավարութեան հաւատարիմ և հա-
մակիր գանուելուն պատճառաւ Ռու-
սերէն թշնամանք և բռնութիւն կրեց :
Տօլլուսայի կողմն ելնող Ռուսե-
րը տակաւին մեծ շարժում մը չըրին :
Մէհմետի վրէ հաղարէն աւելի Օսմ-
զօրք գումարուած էր, և անցեալ
հինգշաբթի երկաթուղիով պաշար
զրկուեցաւ իրենց, բայց Մէհմետի
քաղաքային պաշտօնատարներն անկէ
մեկնած և քիչ հեռաւորութեամբ տեղ
մը փոխադրուած են : Քէօթէնէն
մէջ 1200ի չափ Օսմ զօրք կայ, որ ե-
թէ Ռուսք մեծ զօրութեամբ գալու
ըլլան՝ մեկնելու կը պատրաստուի ե-
ղեր Վասթթայի թիւաբեթ և իսմայիլ
շողենաւներով, որք նաւահանդիսոր
կ'ապսեն :

Ասիոյ կողմէն եկած վերջին լուրե-
րը կարնոյ կուսակալ իսմայիլ փաշա-
յին յուլիս 2 թուով մէկ հեռագիրը
կը բերեն, որ կը ծանուցանէ թէ Պա-
յէզիտի մէջ պաշարուած Ռուսաց օգ-
նութիւն հասնելով, 7—8 ժամ պա-
տերազմ եղեր, և Օսմանեան զօրքը
թշնամայն բաղմութեան պատճառաւ
պարտաւորուեւ է իւր գիւղին և ե-
րեք թիւաւորութիւնով ետ քաշուի :
Իսմայիլ փաշան այս լուր առնելով ան-
միջապէս Ալաշկէրտի զօրաբաժնով
յառաջ խաղացեր և Պաշաղիտէն չորս
մղոն հեռի բարձրաւանդակները հա-
սեր է : Սակայն Ռուսք Պաշաղիտի մէջ
պաշարեալ փաշան ազատած էին : Իս-
մայիլ փաշան գնդապետ Ա. Բիֆ պէյն
իրեւ յառաջապահ զրկեր է, ինք ալ
գունդ մը զօրք թշնամայն վրայ քա-
լեր է, և թիւաւորութիւն սաստիկ կուի
մ'եռաւ Ռուսք վերջապէս պարտաւոր-
ւեր են Պաշէղիտը պարսկելով երեք
ժամ հեռի Գարա—Պուլաք քաղաքի :
Պաշէղիտի մէջ Օսմանեան զօրքը Ռու-
սաց թողած պաշարները գրաւեր են :
Պաթուի կողմն ալ յուլիս 2ին Ռուսք
Լիվա Մուսթաֆա փաշայի գիւղերուն
վրայ յարձակեր, բայց յետոյ նահան-
ջելու պարտաւորուեւ են, և Օսման-
եան զօրքը լեռանց գաղաթները գը-
րաւեր է :

Եւրոպական լրագիրը հետեւեալ
տեղեկութիւնները կը բերեն մեզ Դա-
նուրի վրայ և Հայաստանի մէջ տակեց
10—15 օր առաջ կատարուած գոր-
ծողութեանց վրայ :

Վիէննա 6 յուլիս.
“Կատաղի կուի մ'եռաւ, որ 15
ժամ տեւեց, երեկ՝ հինգշաբթի Ռու-
սերն յաղթուեցան Պիէլայի և Աշուր-
մայիլի գիւղերը բռնող Օսմանեան
զօրքերէն : Երկու կողմէ կորուստը
խիստ չափ է :

“Ռուսերը Ձիշթովա կը քաշուին,
թուրքերն ալ նոր յարձակում մ'ընե-
լու կը պատրաստուին :

Ձերնովից 6 յուլիս.
“Հարիւր քան հազար Ռուս, քան
հազար ձիւաւոր, 250 թիւաւորութիւն,
առանց պաշարման թիւաւորութեան
հաշուելու, Դանուրն անցան :

“Ռուսնու հաղարի չափ Ռուս Ձիւ-
նիցա և թուրք—Մարիէրէլ մտան :

“Նիքոլա մեծ գուրս իւր սպա-
յաժողովին և ինքնաթիւի զօրավարին
հետ Դանուրն անցնելով իւր բանա-
կակերտները Ձիշթովայի մէջ հաստա-
տեց :

“Ձիշթովա անցնող Ռուսական զօր-
քն երեք զօրաբանակի բաժնուելով,
առաջինի Ռուսնուդի վրայ կը քաշէ,
երկրորդը Պալքաններուն վրայ, եր-
րորդն ալ Նիկոպոլի վրայ :

“Ռուսերն անցագիր բնաւ չեն
տար Հիւնից և Յունաց :

Ձիւնիցա 7 յուլիս.

“Դանուրն անցնող Ռուսական զօ-
րաց երկրորդ բանակն արդէն Պիէլա
և թիւնովա քաղաքները գրաւեց :

Պիէլին 5 յուլիս.

“Ռուսական աղբիւրէ ելած հե-
տեւեալ պաշտօնական տեղեկութիւն
ներն Ասիոյ մէջ անցած անցքերէն
մէկ քանին կը բացատրեն :

“Լորիս Մէլիքով զօրապետը կար-
սի և կաղաւանի կողմէն Արամի հո-
վիտը մտնելով գէպի կարին կը քա-
լէր : Բայց թուրքերը Ձիւնից մէջ ա-
մուր գիրք մը բռնելով իւր աջ կո-
ղին կ'ապաւնային : Մէլիքով թող չը
տալու համար որ թուրքերն 'ի գիւմար
և 'ի թիւանց իւր վրայ յարձակին,
գէպ արեւմուտը աւելի յառաջանա-
լէ առաջ պարտաւորեցաւ գէպի հիւ-
սիս գառնալ, որպէս զի նախ Ձիւն-
նի վրայ յարձակի, և եթէ հնար է՝
թշնամին անկէց վանէ :

“Այս փորձն 'ի գերեւ ելաւ, Լորիս
Մէլիքով յաղթուեցաւ և ետ քաշ-
ուելով Արամի հովիտը վերադարձաւ :

“Նոյն միջոցին լուր առաւ թէ
Տէր Դուկասովի հրամայած հարուա-
յին զօրաբաժնին ալ, որ պիտի գար
Արամի հովանի մէջ իրեն հետ միա-
նար կարնոյ վրայ քաշուլու համար,
նմանապէս յաղթուեւ էր Տէրի Պա-
պայի առջև, և գէպի Ալաշկէրտ
կամ թուրք—Գալէ նահանջեր էր :
Տէր Դուկասովի նպատակն էր գէպի
սահմանադրուիլը գառնալ և Պաշա-
ղիտի օգնել : Մէլիքով զօրավարն ալ
վերջին լուրերուն նայելով՝ գիտաւ
րութիւն ունէր Արամի հովանի մէջ
գետեղիլ և կարսի ճանրան պահպա-
նել Ձիւնից յաղթող զօրութեանց
գէպ :

Պիէլին յուլիս 6 թուով Աման-
Հալասի ուղիւ հեռագիր մը հե-
տեւեալ տեղեկութիւններ կուիւնէ Մէ-
լիքովի զօրավարին Ձիւնից վրայ ըրած
յարձակման վրայ :

Թէ և եկեղեցական, բայց կրօնական խնդրոց վերայ ըստ բաւականին հմտութիւն չունի, և թէ այս խնդրոցն նկատմամբ կրօնի նախանձայնութեամբ հրապարակ իջած է, այլ իւր հոյակաւանական տաղանդն և պատուոյ զգացումն աշխարհի յայտնելու:

Հայր խնդիր, Զեղ վերաբերեալ կէտերն Զեղ թուղով, անցնինք լուս խնդրոցն:

Մեր երկու գաղափարներէն քահանայներն իսպառ քահանայութենէ լուծեալ հրատարակող վճիռն՝ ձախող վճիռ անուանած ենք, և զայս հաստատած ենք Ս. Գրոց անդիլի վկայութիւններովն, որոց վերայ հիմնած են եկեղեցւոյ Ս. Հարց իրենց բացատրութիւններն և իրենց հաստատած օրէնքներն ու կանոններն: Ուստի երբ մեր այդ վճիռն Ս. Գրոց հարազատ մեկնութեան հակառակ ըլլալն յառաջ բերինք, մեր Աթո. եղբայրն ինքնին իմաստասիրելու էր թէ Համալուսար ժողովն իւր այդ վճիռովն Ս. Հարց սահմանած օրենքն և կանոնաց ալ հակառակ վարած էր, վասն զի Ս. Հարց ըստ հանց և ըստ քրոջ հաստատած չեն եկեղեցւոյ կանոններն, ինչպէս մեր Ս. եղբոր պատ ի պատ և տարտամ զրոյցներէն այդպէս կը հասկցուի, այլ անոնց միակ սղորիւր Ս. Աւետարանն եղած է և է:

Առաքելական եկեղեցին՝ զղմամբ և արտասուօք տալախարութեան զիմող մեղացեղոյն ներքու սկզբունքն անդատին իւր ծաղումէն ընդունած է, ապա թէ ոչ ինչ հարկ կար եկեղեցւոյ խորհրդոց կարգը դասել Ազախարութիւնը, որ Ազախարութեան եկեղեցւոյ բարոյական պատիժն է, զոր կը զօրծաղը՝ զղմամբ ու արտասուօք առ ինքն զիմող իւր մեղացեղաւ անդամաց վերայ: Ազախարութիւնն իրեւ բարոյական պատիժ չընդունելն, զայն եկեղեցւոյ խորհրդոց չճանչելու համար ինչ է և այս է նորապանդից ճիշտ ըսկըղունքն, զոր մեր նորընծայ եղբայրն անդիտարար քարոզել եղած է:

Ազախարութեան քրիստոնէոյ մը ունի՝ համալուսարութիւն միտեալի մը համար ըսել թէ սկզբնական մեղքէն ազատած չէ, նոյնպէս Քրիստոսի Ս. Մարմնոյ և Ս. Արեան հաղորդող բարոյապաշտի մը համար թէ ներգործական մեղաց համար քառութիւն չդառաւ: Գործեալ ո՞ր քրիստոնէայն կիշխէ ըսել եկեղեցւոյ կանոնական հրամանին համաձայն կատարուած ամուսնութեան համար թէ տալիսն օրիւնաւոր ամուսին չեն, այլովն հանդերձ: Այսպէս ալ սրտի մտօք տալախարող մեղացեղոյ մը համար չըսուի թէ անոր մեղքն Զեղած չէ և թէ ուրիշ պատիժ ներ տնօրինելու է, ինչպէս այս դատարարները խնդրոյն մէջ կը տեսնուի այդ հակաւետարանական վարդապետութիւնն, զոր Ս. Հարց մտքէ անգամ անցուցած չեն:

Եթէ Աստուծոյ եկեղեցին ամենաճանր մեղաց իսկ թողութիւնն կարելի չը համարէր, ոչ ամենուն փրկութեան համար աղօթելու էր և ոչ ալ մեղաց թողութեան համար աղախարարներն սաղմանելու, բայց քանի որ մեղացեղոյն համար աղօթելու և աղախարարաց սկզբունքն ընդունած է, երկէսն համարին իսկ կրնայ իմաստասիրել թէ սրտի մտօք զղացեղոյն ամենաճանր յանցանքներն իսկ աղօթելու և աղախարարնք կը քառուին:

Զայս կը հաստատեն հետեւեալ վկայութիւններն: Այլ կամովն գմա՝ մեղաւորին, այլ զգտնող նորա և զիեալ: «Եթէ դարձել և եթ մարմնաւոր առ Տէր, և յուսացի յողորմութիւն նորին՝ որ վասն փրկութեան ամենեցուն յանձն էաւ ըզմաս, ամենայն մեղք նորա՝ որչա՞նք և ծառայելն և բաղնա՞նք թողցին նա»:

Ազախարութեան խորհրդոյ միւս դրութիւնն ալ է կենդանորէ վատասկնըն, զոր մեղքը կորուսած են: այսպէս կը մեկնէ Ս. Հերմիման՝ Առաքելոյն առ Գալատացիս զրած մէկ խօսքն. (Գալ. Գ. 4.)

Քրիստոնէական եկեղեցին՝ ինչպէս ըսինք՝ միմիայն տալախարութիւնն իրեւ պատիժ ընդունած է և այն խիստ նեւրողարար, ինչպէս կը վկայեն Ս. Տերտուլիանոս և Ս. Կիլարիստոս, թէ «Եթեւ

կոպտունք ըստ աղաչանայ մարտիրոսացն ներկին տալախարողաց զգալութիւն մեղացն» և Ս. Ս. Ժողովն Նիկիոյ երկուստաներորդ կանոնին մէջ կրէ. «Օրէն լիցի եպիսկոպոսաց ներողադոյնս վարել ընդ տալախարողս»:

Այս մասին Ս. Հարց չատ վկայութիւններն ալ կան, բայց մեր խղճահար նորընծային, (որ Ս. Հարց և Աւետարանի մէջ հակասութիւն մի նշմարած է, որուն համար մեր յառաջ բերած Աւետարանական վկայութիւններովն զո՞չ չըլլար), թող բաւական համարի հետեւեալ մի քանին: «Ազախարութիւնն ընդունել զթողութիւն մեղաց» (Որովինէս ճառ Բ.): Զաղաւեղեալն և զախարարեալն հոգեով և մարմնով սրբէ ստուգ խոստովանութիւնն ըստ աւազանին շնորհի որ դայցէ յապաշխարարութեան, զործակցութեամբ հոգւոյն սրբոյ՝ լինի նորա՞նք Բնակարան» (Յաճախապատում):

«Մի երկնչիւր ի մեղաց բաղմութենէ մտանել յաղախարութիւն, միայն անկիր առ Աստուծոյ, որ չէ դատարար, այլ բժիշկ, չէ դաշիճ սպաննող, այլ հայր զորովազին: Ընդ առաջ քո երանք որպէս անտուկ որդւոյն, զպարանոցաւ ըով անկանի որ դարձար յաղախարութիւն, յաշտ առ բերան համբուրէ գրեզ Հայրն երկնաւոր, զպատմութեանն առաջին անմեղութեան հրամայէ զգեղացանել քեզ, կոչեալն ի միւսանգամ՝ թիւնիցն թշնամւոյն ամբարցուցանէ գրեզ...»: (Յ. Մանգալ. ի ճառն Ապաղախ):

Այս է Ս. Աւետարանի և եկեղեցւոյ վարդապետութիւնն, որուն հպատակելու և որուն հետեւելու պարտական ենք, ի բաց թողլով ամեն անձնական կիրք, կարծիք և շահ...:

Այլ երբ՝ արդեօք մեր պաշտօնակից եղբայրն հարցանել իրեն թէ այդ կրկին եկեղեցականներն զղացեալ են թէ անգեղ: Եթէ սրտի մտօք զղացին՝ այլ ևս այդ յոսի ընթացից մէջ չգտնուի առաջադրելով, ո՞ր եկեղեցական օրինք քահանայութեան կը լուծուի, այդ օրէնքն ո՞րք ունանք օրինարար են ի Ս. Հարց, զորս յանրապի կամարտանէ՞ Ս. Աւետարանին հակառակ կարծիքներ և օրէնքներ անոնց սեփականելով: Իսկ եթէ անգեղ մտայած են իրենց զործած չարեայ մէջ, Համալուսար ժողովը զանոնք ինչ օրինք եկեղեցւոյ անդամներ և բարեպաշտ ընդունենք: Քրիստոսի եկեղեցին իւր անդիլ մեղացն ոչ միայն բարի գաւաւ չընդունիր, ոչ միայն անդամակցութեան ախտոյն անոր արժանի չտեսնել, այլ այնուհետեւ իրեւ հեթանոս և մաքսաւոր կը նկատուի:

Այս բացայայտ ճշմարտութեան զէմ վարուեցաւ Համալուսար ժողովը մեծամասնութիւնն, որ մէկ քանի ճարտիկ և կեղեցականներու հաճոյց և կամաց կուրօրէն գործիք եղած է և անոնց ձայնին որձադանք կուտայ իրեւ երկնային պատգամի: Իրաց այս ցուպի վիճակին ի նրկատի առնելով, լուս համարեցաք հրապարակի վերայ այս խնդիրն լուսարանել և հասարակութեան գոտաւորանին յանձնել, քան թէ Համալուսար ժողովը մէջ ընդ ջուր և ընդ օդ աղալ:

Ուրեմն թող վստահ ըլլայ մեր Աթո. եղբայրն թէ Համալուսար ժողովը հալածանքներէն խրաշած չենք, վասն զի վատիկանաց բռնութեան դարը անցած է, և խմբագրութեան զիմելին ալ անարդարանալի գործ մը չհամարուի և ոչ ալ անպատեհութիւն, ինչպէս մեր պաշտօնակից եղբայրն կատարելի, առարկութիւն մի՞ որուն մէջ իւր խղճահարութեանն ու մոլեռանդութենէն ուրիշ պատճառ չենք տեսնել: Ստուգիւ արդահա՞տութեան արժանի է իւր վիճակն, զի մի և նոյն անդադանութեան մէջ կը գնէ ինքզինքն անոնց յիշելու թէ այդ գտն իւր ստուած դասն է, և թէ ինքն ալ եկեղեցական մի է...:

Մեր եղբայրն չուստորի և քաջապաշտ համալուսար թէ ո՞ր ինչ խնդրոյ մը նկատմամբ հասկնու և չափաւոր լեզուով հրապարակի վերայ գրելն ու խօսիլն ոչ միայն անպատեհութիւն չէ, այլ և պէտք մը, զոր բոլոր աշխարհ ճանչցած է: Ուրեմն մեր եղբոր ջիղերուն բնաւ թող չդալն:

Հրապարակաւ այդպիսի խիստ վճիռ մը քննադատելու համար, վճիռ մը, որ Աստուծային ամենողորմ գթութեան և ներողութեան զլիսովին հակառակ է, և Հոյատանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ դարաւոր, անստղիւտ, անբիծ և սղատ նուիրապետական կարգը վեր ի վայր կը շրջէ:

Կը յիշէ՞ արդեօք մեր Ս. եղբայրն որ այս խիստ վճիռն տրուելու միջոցին սղջաւոր եկեղեցականներէ ունանք ձեռնպահ գտնուեցան, և Արաղան Պատրիարքն ալ այդ վճիռն համալիտ չըլլալն յայտարարեց, որուն կարծիքն ու դիտողութիւնն իրեւ Պօլսոյ ընդհանուր Արքեպիսկոպոս մեծ նշանակութիւն ունի այդ տեսակ խնդրոց մէջ ըստ Ս. Հարց սահմանած եկեղեցական օրինաց: Միթէ ուրիշ ապացոյց մի ալ տանք չէ՞նք համարել այդ վճիռն այսօրինաւորութեան. եթէ Առաքելաց և Սրբազան Հայրապետաց օրինաց, կարգաց և կանոնաց համաձայն ըլլար, այդ եկեղեցականները ձեռնպահ չըլլաւ նուրաւ էին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՈՄՆ
(Ծարձակութիւն)

Սոյն նամակին վրայ Լուսոյ Աթո. խմբագիրն ալ հետեւեալ տողերը կաւելցնէ:

«Հայրենիքի մէջ երեցող եկեղեցական Ս. Հայրը նորընծայ չէ, ինչպէս կը կարծէ մեր յօդուածագիր Գեր. Ս. Հայրն, այլ այդ վճիռն Համալուսար պատկառելի ժողովոյ մէջ պաշտպանող Ս. Հարց մի փոքրամասնութիւնն է, որ գլուխ գլխի տալով կը խմբագրեն եկեղ. ինչպէս որ ստուգած ենք:

«Յաւալի է ըսել որ սոյն եկեղեցական Ս. Հայրերը՝ մեր մի քանի թուոյ մէջ սղջամիտ եկեղեցականի մը յօդուածները հերքելու զօրաւոր վկայութիւններ և փաստեր գտնուած անկարողութեան մէջ, յիշեալ բարձրաստիճան եկեղեցականին՝ կրօնական այս տեսակ խնդրոց նկատմամբ հրապարակաւ խօսածներն անպատեհութիւնն է, որ գլուխ գլխի տալով կը խմբագրեն եկեղ. ինչպէս որ ստուգած ենք:

«Յաւալի է ըսել որ սոյն եկեղեցական Ս. Հայրերը՝ մեր մի քանի թուոյ մէջ սղջամիտ եկեղեցականի մը յօդուածները հերքելու զօրաւոր վկայութիւններ և փաստեր գտնուած անկարողութեան մէջ, յիշեալ բարձրաստիճան եկեղեցականին՝ կրօնական այս տեսակ խնդրոց նկատմամբ հրապարակաւ խօսածներն անպատեհութիւնն է, որ գլուխ գլխի տալով կը խմբագրեն եկեղ. ինչպէս որ ստուգած ենք:

... Եթէ նախ.

Հայրական Աթոքարանի տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել Ձեր Ազնուութեան, որ յառաջիկայ կիւրակի օրէն ըսկըսեալ, յիշեալ ուսումնասիրն միամեայ հարցաքննութիւնը պիտի կատարուի ըստ հետեւեալ ցուցակին.

Յուլի 10 Կիւրակէ՝ ժամ (ըստ Թուրքաց) 2-5,15 Թուրքահայութիւն, 5-50-4,45 Հանրահայէլ, 6-7,15 Երկրապարտութիւն, 7,50-8,50 Բնագիտութիւն, 8,45-10 Տարրաբանութիւն, Մարմնամարզք:

Յուլի 15 Չորեքշաբթի ժամ 2-3 Կըրօնագիտութիւն, 5,15-4,45 Պատմութիւն Ընդհ. և Հայոց, 4,50-5,50 Պատմ. Հայ Դպրութեան 6,50-7,50 Աշխարհագրութիւն, 7,45-8,45 Պատկերահանութիւն, 9-10 Վայելչադրութիւն, Մարմնամարզք:

Յուլի 15 Ուրբաթ ժամ 2-5,50 Հայերէն, 4-5,50 Թուրքերէն, 7-8,50 Դադըրէն, 9-10 Անգլերէն, Մարմնամարզք:

Տնօրէնութիւնն խորին անխառնութեամբ կը խնդրէ Ձեր Ազնուութեանն որ հաճիք քաջալերել իւր սանուց միամեայ աշխատասիրութիւնը Ձեր ներկայութեամբ պատուելով:

Ի Կիւնայ Տնօրէնութեան
4 յուլի 1877 Յ. ԳՈՐԴԳԵՆ

Ի Լ Ա Ն

Պէյդօղ Տէպողչանէսիւնէ մուպայեւեա օլունաճաղ 2000 դանթար վալաւաւուն 1000 դանթարը թարիխի գոնթըրթօտուն իթիպարէն 15 կիւնտէ վէ դուսուր 1000 դանթարը տալի անտէն 15 կիւն միւրուրինտէ տէպաղչանէի մէղքիւրէ թէսլիմ դըլընմաք վէ պահաւը վերլիւնէք մաղապուղ սէնէտի իւղէրինէ սուրէթի թանդիմնտէ նրաֆը պէր վէճէի վէչին վէ նըսթը տիկէրի 31 կիւն միւրուրինտէ սիմ մէճիպլէ 20 դրուչա վէ մէճիպլէ վերլիւնէտէ փիւսացա ֆիյալթըլըսա պիլ հիսապ ֆարըլըլըսա պէրապէր գոյիմէ օլարապ տէպաղչանէի մէղքիւրաէն պէրլիմէք շարթըլըլըսա պէճէր դանթարը 112 դրուչա օլարապ թարիպի էօհաէսինտէ օլուպ թէմուզըլըսա պէճիւնի պէճիւնի սալը կիւնիւ գարալը գալթիսի վերլիւնէ. յիւստէն, իթիպիլմէկէ թալիպ օլանլարըն եէվլի մէղքիւրաէ Տարի Ծուրայի տաքէրլիւն կէլմէլըն:

30 հաղիրան 1877
Պապը Սէրուսթէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՅ
ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒՄՈՍԻ
Թարգմանէք Ե. Մ. Ս.

Հայ ժողովրդեան ընթերցասիրութիւնը գոհ ընելու մտօք՝ «Մատենադարան ընդհանուր անուամբ հետդհեաէ կրթական և օգտակար գործեր պիտի հրատարակենք: Այս անգամ սկիզբ կընենք այս ձեռնարկութեան՝ «Երկուստանս կեսարաց պատմութիւնն» ի յոյս ընծայելով թարգմանօրէն, և աներկմիտ եմք որ Հայ հասարակութիւնը, քաջ զգալով այս Մատենադարանին օգտակարութիւնը, պիտի փութայ արդեամբ քաջալերել մեզ որպէս զի սոյն ձեռնարկութեան մէջ յարատեւենք:

Կը ծախուի Եէնի ճամի Զիլինիլըլէր ճատտէի թիւ 2, Ս. Գ. և Եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 Ֆր. 25 սանթիմ:

ԺՕԶԵՖ ՊԱՍՍՄՈ
Հեղինակ
Ա.Է.ԲՈՒՆԴԻՐ ՏԻԻՄԱ

Թարգմանէք Գ. Եաղմաճեան
Աշխարհամանօթ հեղինակին նըշանաւոր պատմական վէպերէն մին և զոգ սոյն գործին թարգմանութեան և օթներորդ հատար Պօլիս հասած ըլլալով, արդոյ բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց անդորրագիրը ներկայացնեն Ս. Գ. և Եաղմաճեան գրատունը Եէնի-ճամի Զիլինիլըլէր ճատտէի թիւ 2, և նոյն հատորն ստանան: Այս առթիւ կը ծանուցուի թէ սոյն հրատարակութեան բաժանորդագրութիւնը դոցուած է:

Կը ծախուի վերլիլըսա գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին մէկ հատորին 2 Ֆրանք 25 սանթիմ:

Արդոյ գործը ութ հատորէ պիտի բաղկանայ:

ՄԱՐԻՕՆ ՏՐԼՈՐՄԻ ԽՈՍՏԱՎԱՆԱԲԸ
Կ Ա Ս

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԳԱՐ
Հեղինակ Էօճէն տը Միւրադ
Թարգմանէք Գ. Զիլինիլըլէր

Սոյն հրահանգի վէպին Հայերէն թարգմանութեան Բ. հատորը Պօլիս հասած ըլլալով կը ծախուի Եէնի ճամի Զիլինիլըլէր ճատտէի թիւ 2 Ս. Գ. և Եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 2 Ֆր. Արդոյ գործը չորս կամ հինգ հատորէ պիտի բաղկանայ:

Եղեկաթեանց համար պէտք է ղրմել Մի-
աթիոյ Բէրէմպէ յաղարի մօտ Ասպանի
Վիսգօր գործակաւար